ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ
ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հողային և քաղաքացիական օրենսգրքերին, <<Հրապարակային սակարկությունների մասին>> օրենքին, ՀՀ կառավարության 12.04.2001թվականի հ.286, Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի հ.648-Ն և Երևանի քաղաքապետի 12.04.2010 թվականի հ.1540-Ն որոշումների համապատասխան, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովի 15.08.2018թ. նիստի արձանագրությունով տրված առաջարկությունները.

1. Մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրման համար առանձնացնել հողամաս համաձայն կից հավելվածով հաստատված ելակետային տվյալների, մեկնարկային գնի:
2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 15.12.2005թ հ.2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի դրույթները, ինչպես նաև այն հանգամանքը, որ հողամաերի գործառնական նշանակությունների սահմանումը չեն առնչվում ՀՀ կառավարության 29.12.2011թ հ.1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետով նախատեսված դեպքերի հետ և համապատասխանում են 2-րդ ենթակետի դրույթների հետ, սույն որոշման հավելվածի հ.1 կետում նշված հողամասի գործառնական նշանակությունը սահմանել ընդհանուր օգտագործման, սույն որոշմանը կից նախագծման թույտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանքի) համապատասխան:
3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովին՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված կառուցապատրման իրավունքով տրամադրման ենթակա հողամասի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը և սահմանված կարգով ապահովել մրցույթի անցկացումն ու արդյունքների ամփոփումը:
5. Հանձնարարել վարչական շրջանի ղեկավարին՝ սահմանել հսկողություն կից հավելվածով նշված հողամասում ապօրինի հողազավթում և ինքնակամ կառուցապատում բացառելու նպատակով:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի տեղակալ Վ.Նիկոյանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Կ. ԱՐԵՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի **2018թ.**

16.08. հ.**2865-Ա** որոշման

Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովի կողմից հաստատված կառուցապատման իրավունքի մրցույթի ներկայացվող հողամասեր

հ/հ	Հողամասի հասցեն (գտնվելու վայրը) տարածագնահատման գոտին	Ծածկագիրը Մակերեսը (քմ)	Կառուցապատման իրավունքի ժամկետը	Կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային չափը	Օգտագործման նպատակը	Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
Մալաթիա Սեբաստիա վարչական շրջան						
1	*Անդրանիկի փողոց հ. 79/8 7-րդ գոտի*	*Կ 2018-09 31.11 քմ*	*10 տարի*	*15000 դրամ*	*հասարակական նշանակության օբյեկտ կառուցելու համար*	*բնակավայրերի, ընդհանուր օգտագործման տարածք*

Երևանի քաղաքապետարանի
աշխատակազմի քարտուղար *Ս.ՄԱԿԱՐՅԱՆ*